# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ 1-Ի ԿԻՍԱՄՅԱԿԻ

2011 թվականի 1-ի կիսամյակի ընթացքում ստացվել են 53 դիմում բողոքներ:Քննարկվել են բոլոր դիմում բողոքները և տրվել են պատասխաններ:
Քաղաքացիների ընդունելությունների թիվը կազմում է 127 մարդ:
Ստացվել են 35 պաշտոնական գրություններ, որոնք քննարկվել և տրվել են պատասխաններ:
Նախապատրաստվել և տարբեր կազմակերպություններին են ուղարկվել 116 պաշտոնական գրություններ:
Անցկացվել է ավագանու 6 նիստ, որոնք արձանագրվել և վավերացվել են ավագանու անդամների կողմից:
Արձանագրվել է համայնքի ղեկավարի 10 կարգադրություն:
Կայացել է համայնքի ղեկավարի 10 որոշում:
Համայնքի անդամների 53 դիմում բողոքների հիման վրա կատարվել է 15 հողամասերի չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ, 12 դիմումներ՝ պտղատու և խաղողի այգիների հիմնման աշխատանքների ակտավորման գործընթացի համար, իսկ մնացած 3 դիմումները քննարկվել և տրվել է կոնկրետ պատասխաններ:
Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել է երիտասարդական, հայրենասիրական և այլ տեսակի միջոցառումներ:
Փետրվարի սկզբին գյուղապետարանի շենքում կազմակերպվել և անցկացվել է շախմատի ավանդական մրցաշար՝ նվիրված Արցախյան ազատամարտին նվիրված Ջանֆիդայի զոհված ազատամարտիկների հիշատակին:
Մրցաշարում հաղթող 3 շախմատիստներ պարգևատրվել են նվերներով, իսկ 10 զոհված ազատամարտիկների հարազատներին՝ նվերներ և դրամական պարգևներ, որից հետո զոհված ազատամարտիկների հիշատակին տրվել է ճաշկերույթ 50 համայնքի անդամների համար: Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ դպրոցի, առողջության կենտրոնի և գյուղապետարանի շուրջ 70 կանանց տրվել են ծաղիկներ և նվերներ:
Մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրվան, որի ժամանակ ծաղկեպսակներ և թարմ ծաղիկներ են դրվել զոհված մարտիկների հուշարձանին, իսկ պատերազմի վետերաններին տրվել են դրամական պարգևներ և կազմակերպել ենք ճաշկերույթ:
Մայիսի 28-ին ռուսական սահմանապահ զորքերի օրվան նվիրված տոնակատարության համար նվերներ և դրամական պարգևներ են տրվել ուղեկալի անձնակազմին:
Մայիսի 28-ին Սարդարապատի հերոսամարտի հաղթանակին նվիրված միջոցառում է կազմակերպվել Սարդարապատի հուշահամալիրում և ճոխ սեղան է գցվել հյուրերի համար:
Ամիսը 2 անգամ կատարվում է փողոցների աղբահանություն գյուղապետարանի միջոցների հաշվին:
Կատարվել են խմելու ջրի վարակազերծում և ժամանակին կատարվում է ջրամատակարարման աշխատանքները / ծռման ամիսներին օրական 2 ժամ, իսկ մնացած ամիսներին 3-4 ժամ/:
Կատարվել են համայնքի փողոցների և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և ավազապատման աշխատանքներ:
Համայնքում գործում են 1 միջնակարգ դպրոց, 1 առողջության կենտրոն և 1 մանկապարտեզ:
Առողջության կենտրոնում գրանցված բնակչության թիվը կազմում է 3215 բնակիչ, որից մեծեր՝ 2278, փոքրեր՝ 937: Հաճախումների թիվը կազմել է 1307 մարդ, որից մեծեր՝ 872, փոքրեր՝ 435:

Գրանցվել է 146 տնային կանչեր, որից մեծեր՝ 103, իսկ փոքրեր՝ 43:
Պրոֆիլակտիկ նպատակով սպասարկվել է 502 մարդ, որից մեծեր՝ 189, միջին դպրոցահասակներ՝ 313:
Նեղ մասնագետների կոնսուլտացիա ստացել են 198 հիվանդներ:
Առողջության կենտրոնը գործում է որպես ընտանեկան, որտեղ իրականացվում է ընտանեկան բժշկություն:
«Վազգեն Սարգսյանի» անվան մանկապարտեզը գործում է ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը 3 խմբով, հաճախում ցուցակային 78, փաստացի հաճախում՝ 78 երեխեներ:
Կազմվել է նախագիծ 2011 թվականին Ձանֆիդա գյուղը 100 տոկոսով գազաֆիկացնելու համար:
Ձանֆիդա գյուղական համայնքում լավ վիճակում չի գտնվում սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքները, որը իր բացասական հետքն է թողնում համայնքում կատարվող բոլոր աշխատանքների և միջոցառումների վրա:

եկամուտները 2011 թվականի 1-ի կիսամյակ

1 . Հողի հարկի - նախ.1900.0 հազ դրամ,հավաքագրվել է 1300.որը կազմում է 68 %
2 . Գույքահարկ - նախ. 1600.0 հազ. դրամ, հավաքագրվել է1180.0 որը կազմում է 74 %
3 .Վարձակալված հողի վճար -նախ.. 200.0 հազ. դրամ,հավաք.է 120. որը կազմում է 60%
4 . Դոտացիա -նախատ. 14261.0 հազ. դրամ, ստացել ենք 14261 հազ. դրամ, որը կազմում է 100 %
5 . Կապիտալ գործառություն/ հողի օտարում/ - նախատ.4825.0հազ. դրամ,կատարվել է 2227.0 հազ. դրամորը կազմում է 46 %
Ընդամենը - հազ. դրամ, որը կազմում է 83.7 %

Ծախսերը

1. Աշխատավարձ գյուղապետարանի աշխատակիցների –6233.0հազ. դրամ
2. Սոց վճար - 1295.0 հազ. դրամ
3. Սուբսիդիա - 1907.0 հազ. դրամ
4. Սոց օգնություն - 1300.0 հազ դրամ
5. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում - 5703.0հազ. դրամ
6. Կապիտալ կառուցում և վերանորոգում - 3161.0դրամ
ընդամենը 19599.0 հազ.դրամ

Համայնքի առջև ծառացած հիմնական խնդիրները:

1 . Կուլտուրայի տան հիմնանորոգում
2 . Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
3. Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշարձանի վերանորոգում
4 . Խմելու ջրագծերի խողովակաշարերի վերանորոգում
5 . Գազաֆիկացում / շարունակական /
6 . Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում և ավազապատում

Ձանֆիդա համայնքի ղեկավար՝ Սանուկյան

13.07.2011 թվական
Ձանֆիդա